

ՊԱՏՄԱԿԱՆ

Ա Ն Տ Ի Պ Մ Ի Տ Ա Ղ

Նոյնպէս ուշադրու է որ տաղարան Դան-
իէլը ժամանակի քաղաքական դէպքերին լա-
ւատեղեակ լինելով նկարագրել է պատմա-
դիտութեան ճամբար Հետաքրքրական ման-
րամանութիւններ: Ահա թէ ինչու պօէմը
պատմական գրականութեան ընդհանրա-
ցումներով, իր արծարծած հարցերով եւ
ժամանակի անցքերի պատկերաւոր նկա-
րագրութիւններով հայ պատմագրութեան
մէջ ունի իր կարեւոր տեղը եւ որի պատկերի
այստեղ ձեռագիր տաղարանից առաջ ենք
րեբում:

Ո՛վ դուք Հայեր, լա միտ առէք,
Հայոց գաղթը ինչպէս էլաւ,
Գրուածքիս դուք միտք դրէք,
Ճիշտն է, որ արձող էլաւ:

Շահ Արար՝ Պարսից արքան,
Բոլոր երկրին կը սփռէր մահ,
Ժողովրդիս սարսափ էր ու տհ,
Դեպ Հայաստան ռոտքի էլաւ:

Պարսկաստանից մեծ բանակով,
Սուր եւ զէճով ու դամակով,
Գշի Հայեր մեծ քանակով,
Դեպ Հայաստան շուտով էլաւ:

Մեծ գոչումով նամիս էլաւ,
Որ անունը աշխարհ էլաւ,
Ու Հայերին ցար կայաւ,
Կասկածանք մեծ՝ ողջին էլաւ:

Մեւ ու դուման գորք էր գալիս,
Բայց Հայերն ին(էին) մտումք լալիս:
Ու գլխներին հող ին տալիս,
Թէ ինչ աստիկ քիփան էլաւ:

Այն քիփանին ի՛նչ անէին,
Կարծես կայաւած ու գնդակ ին.
Պարտաւոր ին ձայն չհամէին,
Զկէր միջոց դարանից լաւ:

Հանգիստ ու խնդն լուս ին կացել,
Տան դռները ողջին բացել,
Ինչ որ կ'ուզեն կարող են վերցնել,
Ողջ Հայերի խորհուրդն էլաւ:

Խորհուրդն այդ չէր Շահ Արասից
Որ կողոպտեն կահկարասից.
Կը հեռվացնէր այդ վնասից,
Կողոպտելու վնաս չէլաւ:

Յօտում է Շահ Արասը
«Նս խնդրում եմ ձեր Հայերից,
Պատիկներից ու ծերերից,
Ազնվատառն մեծ ցեղերից,
Կ'ուզեմ խօսել, խօսքը էլաւ:

Կլիազօրեմ ձեր ամէնին
Ձեզ հետ, ձեր հետ խիզանին.
Ինչ կամենքն է, էնց էն անին,
Հագար անգամ էստեղից լաւ:

Զմտածէք, որ գերի էք,
Իշխանութիւնից քերի էք.
Ազատ, առողջ կեանք կը կրէք,
Շատ երջա՛նիկ, ուրախ ու լաւ:

Օտար մէկը բան չի ասի,
Երբէք ձեզի չի վնասի,
Թէ որ մէկը մի բան կ'առի,
Դրտ մտաւան վնիսն էլաւ:

Հայ իշխաններ իշխան մնան,
Իշխանութեան նստքէն գնան,
Քաղաքացիք քաղաք մնան,
Ազատ կեանքով, ազատ ու լաւ:

Հոգեւորներ ինչ տնօրին ին,
Կը կատարեն ըստ օրէնքի՛ն,
Գործ եւ չունեն ձեր կրօնքին
Կը յարգեն ձեր կրօնը լաւ:

Եկեղեցիներ կը հաստատեն,
Պարսկիկներին կը խրատեն,
Կրօնը ամուր կը հաստատեն,
Դեռ այժմեանից հաստատ ու լաւ:

Որքան գետին դուք կ'ամենաք,
Ինձնից ձրի ողջ կ'ունենանք.
Շինէ՛ք տներ ինչքան կարաք,
Հայաստանից աւել ու լաւ:

Մայրաքաղաքս է Սփահան,
Փափաքողներ, որ ինձ հետ գան.

Լաւ գետինն աւ պտտական,
Պտուղներով առատ ու լաւ :

Կը կատարեմ, ինչ որ ուզէ՛ք,
Լինէ՛ք ուրախ, երբէ՛ք չչափվէ՛ք,
Էնքան, որ ի՛նչ հետ դուրսվէ՛ք,
Ձեզ բաւական էնց էտէ լաւ :

Ես կ'ուզեմ դուք աշխատէ՛ք,
Ժողովրդիս միշտ յարատէ՛ք,
Միրէ՛ք միմեանց, իրար չատէ՛ք,
Ճշմարտապէս ինչ եղբայր լաւ :

Վաճառականութեանը հմուտ,
Ճշմարիտ է՛ք, չէ՛ք խօսալ սուտ.
Ինչ որ կամի՛ք, կը տարվէ շատ,
Գործերի մէջ ձեզ անունը լաւ :

Կ'ուզեմ, որ դուք Պարկաստան գա՛ք.
Պարսկներին դուք յարատ տա՛ք.
Այդ գործերին կրէ՛ք վատակ,
Սովորեցրէ՛ք արունտներ լաւ :

Նոյնպէս վաճառականները,
Յայտնի են իրենց գործերը.
Պտուղներին մինչև ծերը
Տարածուել է անունները լաւ :

Հայն է համեստ ու ճշակով,
Ընթացում է լաւ, չատաճով.
Շատ ետեղն ու շատ փափաճով,
Գործներին շատ վարձ են լաւ :

Սովորեցրէ՛ք ժողովրդին
Աչքիս լոյսն է՛ք ու իմ որդին.
Այս տատմներս ամէն գործ են,
Կը պարտապանեմ քան որդին լաւ :

Ամէն բաների մէջ է՛ք վարպետ,
Լաւ շինարար, հարտաբաւար,
Ձեզ խօսքիս սլոտ մի կէտ,
Տանում եմ ձեզ, սարվեց՞է՛ք լաւ :

Վանկեր ուզէ՛ք կը պատրաստեմ,
Քաղաք, գիւղեր կը հաստատեմ.
Ռանցածներին կը համեմատեմ,
Ներկայ ունցածներինը լաւ :

Թէ ուզեմէ՛ք էջմիածինն,
Հեմքից կը բառնամ, Սփանան կը բե-

Ձկանածի՛ք բարբովին, [րեմ.
Կը պատրաստեմ նրանից լաւ :

Թող կաքաղկոս այնտեղ բազմի,
Կը տամ հրաման, որպէս շահ մի.
Ո՛չ մի տեղ էլ չմնան Հայ մի,
Վազելով գան, թէ Սփանան է լաւ :

Կը տամ վանքին գիւղեր նուէր,
Կը տամ քառասն գիւղեր նուէր» :
Սիրուն էր գաշում շատ տաւել,
Թուում արտանց ողջ գիւղերը լաւ :

«Օտանդունկ ձեզ գրկել է,
Միտքը ուղիղ ձեզ խփել է.
Պատահ ձեզ, վայրի գէլ է,
Մի որս է՛ք դուք անուշ աւ լաւ :

Կ'ուզեմ ձեզի համով-համով,
Վերեն խմի գինի շուկէ շամով,
Այս աշխարհում ովս է ով,
Ով որ ինչպէս արտ, էլաւ :

Այս խօսքերս, որ ձեզ ասի,
Ճիշտն եմ ասում, չեմ վնասի.
Սիրտս տխուր ձեզ կ'սխառսի,
Հայտատանը երբէ մաս էլաւ :

Հիմա բեզեր, աղալարներ,
Մէլիհներ, քեպանք-բաներ.
Ժողովուրդներ ու պարմներ
Տուէ՛ք պատասխան, խօսքն էլաւ :

Կարաղիկոս, երկուսուս,
Որ բազմած է՛ք իմ կողքիս հաս,
Ողջ ամենից է՛ք իմ աչքի լոյս,
Ունէ՛ք ժամանակ, մտածէ՛ք լաւ :

Կը տամ ձեզի ես ժամանակ,
Խորհրդակցէ՛ք, միմ օր մնա՛ք.
Այժմը ետեանում եմ, բարեւ մնա՛ք
Ու իր բազմած գանից էլաւ :

Ընդհանրացան բոլոր մեծեր,
Ու խորհրդով բարբ մտածան.
Ասի՛ր միմեանց, «Մի՛ք կասկածել,
Ասածները բարբ էր, լաւ» :

Թէ որ ճիշտը խօսքին կենայ,
Ասածները շատ լաւ բան աւ . 7

Թէ ուղիղը մա ընթացայ,
Էս մեր կեանքէն էն կեանքն է լաւ» :

Խօսաց մէկ մեծ իր հերթին,
«Է՞նչ ենք կարողանել Շահին,
Ով չլսի, կաշիս կը փրթին» .
Նրան ասին . «Խօսո՞ք է լաւ ,

Պարտաւոր ենք մեծք լսելու ,
Հանապարհը մէկնը քայլելու ,
Պարսկաստան ենք գեպու ,
Թէ՛ վատ , քէ՛ լաւ , ինչ որ էլաւ» :

Նորէն խօսեց մի ծեր մէլիք .
«Այս է ձեր գործն աննիլիք .
Մի քուղք ատէք , վրէն կնիք ,
Մի ապացոյց ձեռքներին էլաւ» :

Իշխանները կը վախճային ,
Ճիշտ խօսքի մէջ մարմնք կային .
Որոշ մասը ցաւով լային ,
Թէ այս ինչ բան էր , որ մեզ եղաւ :

Շահ Արասը աշխարհակալ ,
Հարստութեան չի ակնկալ .
Թէեւ մեծ է ու բռնակալ ,
Բնութիւնը հեզ է ու լաւ :

Եզան ամէն միայնորհուրդ ,
Մեզ մեղացնեն տանիկ ու փութ .
Զգովի են այդ ժողովուրդ ,
Հեռվանայն մեզ լաւ եղաւ :

Բայց քուղք կ'անենք Շահ Արասից ,
Որ չգառնայ իր ասածից .
Կը միամտենք այդ կապածից ,
Կ'անենք ինչ որ հրաման էլաւ :

Բայց իշխաններս իշխան մնանք ,
Ինչ երկրի մէջ էլ գտանք .
Կը ծառայենք , ինչ որ կարանք ,
Միքով , յօժար , մաքուր ու լաւ :

Պարսկաստանում ինչ տեղ լաւ է ,
Տեղ կ'որոշենք , որ մեզ բաւ է .
Թէ պանդուխտ ենք , մեզ մեծ ցաւ է ,
Որ Հայաստան մեզն էլաւ» :

Կրօնաւորները հոգեւոր
Էին քշուաւ ու շատ մուրթ .

Հաւաքուել իմ ազըբ բոյր ,
Թէ կրօնը մեզնէ էլաւ :

Հարսնատ ին , քէ ինչ տնէին ,
Որսուած մեհարուկի մտաց էին ,
Զկար մի տեղ որ ձայնէին ,
Թէ մեր երկիր մեզնէ էլաւ :

Ալեկոծեալ մի մաւ էին ,
Ժողովրդով կը ցաւէին .
Անկոչ գորքեր կ'արշաւէին ,
Որ Հայերին մեծ ցաւ էլաւ :

Մեծածոզով իշխաններով
Եկան կայ՛եան մեծ շահի քով
Ասին . «Կգանք պայմաններով
Որ խօսացիր անցեալ օրն լաւ» :

Իր խօսքերը Շահ Արաս յարգեց ,
Ու պայմանները մի լաւ գրեց .
Ստորագրեց , միջում դրեց .
«Ի՛նչ , ստացէ՛ք իմ քուղքը լաւ» :

Երբ քուղքը Հայերն ստացան ,
Թագաւորից շատ գոհացան .
Դէպ Պարսկաստան պատրաստուեցան ,
Վաղը Հայոց գնալն էլաւ :

Պատուեց Շահ Արաս Հայերին ,
Որ ճշմարիտ խօսքի տեր ին .
Ասաց . «Կը հասնէ՛ք ձեր մուկրին» :
Եզաւ Շահ Արաս ուրախ ու լաւ :

Պայամաքուղքն էր ձեռքներին ,
Էլ հիմա երկիւղ չունէին .
Ներկայ իրենց ունեցածներին
Վերցնեն հետները , հրաման էլաւ :

Հրաման եղաւ . «Տեղից չու՛՛ք ,
Մտեր բաներ ձեռք մի՛ տուէ՛ք .
Ներսիւնը մեծ մի՛ կրէ՛ք ,
Հայդէ՛ ելէ՛ք» , ելէ՛քն էլաւ :

Հէյուան-աշխար մեծ հօտերով ,
Բարձած տեղերն իշխեով .
Կը բշեն քէ՛ ցերեկ , քէ՛ գիշերով ,
Կարաւորը ճանփայ իլաւ :

Գիւղերը դատարկում ին
Ուշի ուշով ակնարկումին .

Նրանք, որ ծոյլ ին, քակում ին.
«Շուտով ելե՛ք», հրամանն էլաւ:

Երբ կը դատարկիմ այն գեղերը,
կրակ ու մուխ էր այն տեղերը.
Ծառ ու տունկ մինչ շիւղերը,
Մուխ եւ կրակ երկիմք էլաւ:

Դիտմամբ այդպէս կ'անէին,
Որ էլ տեղիցը յոյս չունենային.
Ու տները վերան կ'առնէին,
Այդպէս ցաւալի աւերն էլաւ:

Հարիւր հազար ընտանիք ին,
Շուրջն ին առել գաւակներին.
Կով ու տաւար, ոչխար, մաքիմ.
Երկիր փռուց դուստն էլաւ:

Աւերներն էին կանչում,
Կով ու ոչխարներ բառանչում,
Մէրը մանուկը չէր սանձանչում,
Այդպէս մի վատ գուլըր էլաւ:

Կային խեղներ, կային մալէք,
Չայն ին տալիս. «Առաջ քալէք,
Ել այտոնդից չակնկալէք»
Պարսկաց գորքի ձայնը էլաւ:

Մալէքները ազատօրէն,
Թէ՛ փող ունին քէ՛ ե՛ր ցորեն.
Բայց ազատներին ցառն խոր են,
Յետեմերին փռն էլաւ:

Եօթը գոր ու եօթը գիշեր
Կը ցատկէին, ինչպէս զշեր.
Ոտերներն էր կոխուէր փշեր,
Անտերների ձայնն էլաւ:

Ղօչազները գնացել ին,
Անտերները մնացել ին.
Թէ՛ եւ ինչքան էլ լացել ին,
Ել խղճալու մի բան չէլաւ:

Չկար գիւղ մի մուխ չունէ՞մար,
Թէ՛ մուխն էր, քէ՛ կրակը վառ.
Թէ՛ բազ լինէր, քէ՛ տունկ, քէ՛ ծառ
Մուխ եւ փռնի միտսն էլաւ:

Երբ ժողովրդին տեղից պակեց,
Ել ոչ ոքի չխնայեց.

Ետեմերին ուժով չափեց.
«Առաջ անցե՛ք», չռո մը էլաւ:

Օսմանուն է, իմացել է,
Ետեմերինց ոչք բացել է.
Կուռի պատրաստ կացել է,
Թէ այս գաղթը երբէք չէլաւ:

Ուժով կ'ուզեն հային խլեն,
Որ չտանեն իրենց ձուլեն.
Բայց ժողովուրդը սաստիկ քոյլ են,
Երկու կողմից հարուած էլաւ:

Երկու բանակ էին կուում
Ու ժողովրդին առաջ էլում.
Անտաննի կեանք ին կրում,
Շատ-շատերի մահեր էլաւ:

Քեանլանքար ու մէլիքները,
Գնացել ին, չէին հետները.
Որ չիր տեսնի յետեմերը,
Այս քիժմաը խեղներին էլաւ:

Առաջի կարամաը լաւ էր անցել,
Որ Արազին չին մնացել.
Մին տամ հազար ին գնացել,
Դրանցը շատ լաւ էլաւ:

Մնացեալներ կուռի մէջեն,
Երեխաներով կը երկնչեն,
Պատերազմի փողը կը հնչեն,
Անտերների խոր ցաւ էլաւ:

Երբ օսմանուն ուժ վեր առաւ,
Եր պապակած կուռի ծարաւ.
Ժողովրդից մի մաս առաւ,
Գաղթեակներն կիտաւ էլաւ:

Հալածում ին ետեմերինց,
Զրկում ին հաց ու ջրից.
«Քալէ՛ք շուտով այս երկրից»,
Կանչում անխիղճ հալածանք էլաւ:

Կանչելով որ ընկնում ին,
Նիզակը փորին մեկնում ին.
Յզի կանանց փոր բամուտ ին,
Նորամանկաց գաղուխ էլաւ:

Երեխաներ նիզակի սղտին,
Ու ատամներով կը կռտին,

Վա՛յ նորանց, որ շարքից ետ ին,
Արիւնք հաղեբրին ցելս էլաւ :

Ուզում իմ շուտով հասնեն առաջ,
Դրա համար անապարտւմ իմ վազ .
Արդէն ժողովուրդն էր հասեհաս,
Որ վայ ու ճիշը էհտեղ էլաւ :

Հանապարհ չկայ անցնելու,
«Հերթը բռնը չէ գնալու .
Բաւակա՛հին ես մնալու»,
Արազը հակառակ էլաւ :

Շահ Արբասն երբոր նայեց,
Ոգեւորուած բարձր վայեց .
Ճշմարիտ, ուղիղ վկայեց .
«Արարմունքս ուղիղ չէլաւ ,

Բայց նայեաես եմ, ինչ ա՛նեմ,
Լոզ գիտցողներին հրաման կ'անէմ,
Լոզ տակով այս կողմը անցնեն»,
Շահ Արբասէն հրաման էլաւ :

Հայ պաշտօնեա՛հներ ընտանիքով
Անց ին կացել գետը շնորհքով .
Հագարանի՛հ կայի՛ն ստեղծ,
Դրանց լատտեր բաժին չիլաւ :

Անց ին կացել քա՛հի հագար,
Մնացեալ՛ներին էր սատտիկ ագար .
Խո՛մուել ին, ինչպէս հագար,
Որ լոզանալով գնալն եղաւ :

Ողջ բանակն էր անցնում լատտով,
Հեշտ չէր անց՛ել նարանց մտտով .
Զօր ին տայիս անցնել շուտով,
Թափուեն գետը, միջոցն էլաւ :

Արագն էր ուրբ-մուրբ,
Ներս քափուեցին հայեր բուրբ,
Շատ ընկնուած գլխո՛նքը կոր,
Մրցումները ջրին էլաւ :

Որովհետեւ հրաման էր,
Որ խեղճներին բռնի տանէր,
Բայց այդ խորհուրդ անպիտան էր,
Որ այդ վնիւռ ուղիղ չէլաւ :

Գիւղեր, քաղաք կրակել ին,
Յոյսները լաւ փակել ին՝

Սկեզեցի՛ք ողջ քակել ին,
Վերադառնալ յայսեր չէլաւ :

Անյոյս ին, ողջ կը քափուին ջուր,
Դրանք ջրում, տները հուր .
Իրուր գրկուած եղբայր աւ քուր,
Հեղճը վողներ շատերը էլաւ :

Ուժով, գոռով գետ կ'ածէին,
Թէ ի՛նչ կը լինէին, չտոածէին .
Մայր աւ գաւակի կը կօծէին,
Որ դաժան ջրին բաժին էլաւ :

Արազը կլանեց շատերին,
Գերի արեց ալիճներին .
Խեղճ Հայերին, որ անտէր ին,
Անտէրներին այդպէս էլաւ :

Կամաց նետելով մի նար չելաւ,
Է՛քան նետա՛ն, որ կամուրջ եղաւ .
Օսմանլուսն նար հետքը թողաւ,
Հայոց դիակով սէլա՛ք էլաւ :

Որտեղ ճայէլիք հայի գիակ էր,
Կուզէին մեռնել, անցնել փակ էր .
Քանի որ վիճակները շատ վատ էր,
Էլ ասրվել կ'ստիճ՝ չէ լաւ :

Արագն իրան պղտորել էր
Ու Հայերին ողջ խեղճել էր .
Դիակների մէջ նա կորել էր,
Շատ խեղճերի հրեշտակ էլաւ :

Կը հարցնենք . «Ձափսուսացի՞ք,
Շատ շատերին դու հեղճուցիր,
Քո յատակում դու կորսցրիր,
Ինչ վատ բաներ քեզ՞ով էլաւ .»

Էլ ես քեզի չատմեմ, Արա՛գ,
Պարսիկ, օսման էին քարազ,
Վնաս չունի, բռնն էր տնագ,
Մեր դարդերը նրա՛ցէն էլաւ :

Առաջվանից հրաման ունին,
Իրենց հարստութիւն վերնին .
Ուր որ գնան հետները տանին
Ողջ ամէ՛նը ձեռքներին էլաւ :

Անասունները բռալով,
Տափաստանները՝ ման գալով,

ինչպէս իրանց տէրն ին լալով,
Այդպէս ցվուր մի եօտ էլաւ :

Ինչ որ տէրերն էին եղել,
Իրանց տաւար նոյն ին եղել .
Ցվրվել ին, գիծ ին եղել,
Տանիկ ու քիւրդ տէրը եղաւ :

Պատմեմ եիմիկ ի՛նչքան անցան,
Ինչքան մեռան, ինչքան լացան .
Մինչեւ նորանց թիւն իմացան,
Պարսից սահման հաշիւ էլաւ :

Արագ գետից հեռացած ին
Թշնամիներից անցած ին .
Թէ՛ խեղդուած, թէ՛ կտորուած ին,
Շահ Արքայից հրաման էլաւ :

«Տեսէ՛ք ի՛նչքան է թիւր Հայոց,
Ինձի տուէ՛ք շուտ ապացոյց» .
Հազիւ երեսուն հազար հատոյց .
Թէ՛ թիւ հայոց էսքան էլաւ ,

Շահ Արքաւ գառ գարմացաւ :
Որ այդ հաշիւն իմացաւ .
Երեսուն հազար երբ հասկացաւ,
Թէ՛ մ՛ացեալն ո՛րտեղ ելաւ :

«Տէ՛ր իմ արքայ, ի՛նչպէս էլաւ,
Թափում ին գետը, ինչպէս սէլաւ .
Դիակները կուտարջ էլաւ,
Պարսկաց բաժին էսքան էլաւ :

Մի մասն էլ տանիկն առաւ,
Մահասփոխի արջի ծարաւ .
Քոյնց կրկին, թա յետ տարաւ,
Տասն հազար ավել չէլաւ :

Այժմեան թիւն է երեսուն հազար,
Նպատակիդ լաւ դու չհատար .

Առայ անցնելը շատ վազար,
Գետը մեզի պատճառ էլաւ :

Գիտե՛ս, տէ՛ր իմ, ինչքան խեղդուե-
Գետն ամբողջ դիակ լցին . [ցին
Դիակների վրայով այս կազմը անցին,
Ու խղճացող սրանց չէլաւ» :

Էլ ինչ անէր Շահ Արքասը,
Երեսուն հազար էր վնասը .
Որ խեղդրվել էր այդքանը,
Շահ Արքաս փոքր ինչ հոգոց էլաւ :

Քոյնց բերեց ողջ Սֆահա՛ւ՛,
Այդ քաղաքին եղան հաւան .
Պատրաստեցին մեծ Նոր-Ջուզան,
Շինութիւնների սկիզբն էլաւ :

Պատրաստեցին եօթը մալիա,
Պարսիկներ կ'ասին՝ լաւ քաղաւ . (1)
Ամբողջ յատակ, սիւներ քար ա,
Ողջ ծառ ու տունկ Ջուզան էլաւ :

Քաղաքացիք քաղաք մնացին,
Գիւղայեցիք գիւղ գնացին .
Գիւղարէ՛ք լաւ քարեցին,
Հողագործութիւնն ուրի էլաւ :

*Այս տաղը հարստացնում է Շահ Արքաս
Մեծի հրամանով Հայ Ժողովրդի բռնի տե-
ղահանութեանն ու դադիթին նուիրուած
պատմագրութեան դանձարանը :*

*Ընդգծենք եւ այն, որ տաղարանի լեզ-
ուական, ոճական արուեստը եւ տաղի տա-
ռասխալները հրատարակում ենք նոյնու-
թեամբ, սահպանելով ձեռագիր տաղարա-
նում ընդօրինակուած ոտանւորի հարազա
տութիւնը :*

ԱՐԱՄ ԵՐԵՄԻԱՆ

Փետիւնի (իրան)
(Շար. 2 եւ վերջ)

(1) տեսակ

